«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2023/79

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2023 թ. N79

«ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ (ԵԹԿՊԻ)**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 26**

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **Ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով՝ 16.11.2016-16.11.2020թթ.**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023 թվականի փետրվարի 10-ի Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց **«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ** (այսուհետ՝ ԵԹԿՊԻ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

Դիմում-հայտի ներկայացում	11 հունիսի 2020 թ.
Վերանայված ինքնավերլուծության ներկայացում	08 հունիսի 2022 թ.
Փորձագիտական այցի իրականացում	26-29 սեպտեմբերի 2022 թ.
Փորձագիտական զեկույցի ներկայացում	15 դեկտեմբերի 2022 թ.
Թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	09 հունվարի 2023 թ.

«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի

ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար է գնահատվել **«Որակի ներքին ապահովման համակարգը»** չափանիշը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ուսումնական հաստատության կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, նախնական զեկույցի վերաբերյալ բուհի դիտարկումները, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԵԹԿՊԻ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. Ինստիտուտը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում

ԵԹԿՊԻ-ի կողմից հետևողական աշխատանք է իրականացվել մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային բարեփոխումների ուղղությամբ: Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման գործընթացը ինստիտուտի ռազմավարական պլանավորման կարևոր խնդիրներից մեկն է: Մեթոդները ձևակերպված են ՄԿԾ-ներում՝ ըստ առանձին վերջնարդյունքների, իսկ դասավանդման գործընթացում դրանք կիրառվում են՝ հաշվի առնելով դասընթացների առանձնահատկությունները: Ինստիտուտում գործում է գնահատման բազմագործոն համակարգ, սակայն մշակված չեն հստակ ռուբրիկներ և սանդղակներ օբյեկտիվության պահպանման համար:
ԵԹԿՊԻ-ն ունի համապատասխան որակավորում և մասնագիտական կարողություններ ունեցող ՊԴ կազմ: Բուհը հրավիրում է նաև արվեստի վաստակավոր գործիչների, ոլորտի ականավոր մասնագետների դասավանդելու և ղեկավարելու արվեստանոցներ:
ԵԹԿՊԻ-ն տրամադրում է անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ կրթական միջավայրի բարելավման նպատակով՝ ապահովելու շնորհվող որոկավորումների արժանահավատությունը:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

ԵԹԿՊԻ-ն ունի իր գործունեության հիմնական ոլորտներն արտացոլող և շահակիցների կողմից ընկալելի առաքելություն: Ինստիտուտն իր գործունեությունը ծավալում է հաստատված Ռազմավարական ծրագրին համահունչ: Միևնույն ժամանակ, ստորաբաժանումների տարեկան պլանները, սահմանված ԳԱՑ-երը և հաշվետվությունները երբեմն չեն արտացոլում ՌԾ գործողությունների պլանը, չեն նպաստում դրա արդյունքների վերլուծությանը:
Բուհում որոշումների կայացումը տեղի է ունենում կոլեգիալության սկզբունքով: ԵԹԿՊԻ-ում առկա են տվյալների հավաքագրման մեխանիզմներ և գործիքներ, միևնույն ժամանակ կատարված հարցումների, քննարկումների արդյունքների, ներկայացված հաշվետվությունների մանրամասն վերլուծություն չի իրականացվում՝ բուհի գործունեության գնահատման մեխանիզմների համապարփակ ներդրման միջոցով ապահովելու տվյալահենք և արդյունահենք կառավարում:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

ԵԹԿՊԻ-ն առաջընթաց է արձանագրել երկու ռազմավարական ուղղություններով՝ հետազոտություն և միջազգայնացում: Ակտիվացել է բուհի մասնակցությունը միջազգային շարժունության ծրագրերին և միջազգային փառատոներին, ընդլայնվել է համագործակցությունների շրջանակը: Բուհն ունի նաև միջազգային ուսանողներ ներգրավելու պոտենցիալ:

ԵԹԿՊԻ-ն հետազոտական և ստեղծագործական բաղադրիչները դիտարկում է մեկ միասնության մեջ՝ կարևորելով ստեղծագործական բաղադրիչը: Միևնույն ժամանակ ՌԾ-ով սահմանված այս միասնությունն ապահովելու նպատակով ծրագրերի որոշ դասընթացներում, պրակտիկայի հանձնարարականներում, ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում ԵԹԿՊԻ-ին դեռ հստակ չի սահմանել հետազոտական բաղադրիչը՝ որպես գնահատման սանդղակի բաղկացուցիչ մաս:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և իրականացումը կբերի որակական բարելավումների, սակայն անհրաժեշտ է իրականացնել սահմանված որոշ միջանկյալ արդյունքների և դրանց գնահատման ժամկետների հստակեցում:

Ելնելով վերը նշվածից՝ Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Որակի ներքին ապահովման համակարգը»** չափանիշում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - տարեկան պլանների և հաշվետվությունների գործող ձևաչափերի վերամշակմանը՝ համապատասխանեցնելով ՌԾ գործողությունների իրականացման պլանին և գնահատելով դրանք ըստ ԳԱՑ-երի,
   - տվյալների հավաքագրման մեխանիզմների կատարելագործմանը՝ կառավարչական որոշումների կայացումը տվյալահենք դարձնելու նպատակով,
   - որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը կառավարման բոլոր գործընթացների լավարկման նպատակով,
   - ռազմավարական ծրագրում սահմանվող գործողությունների իրատեսականությանը և բյուջե-ռազմավարական ծրագիր փոխկապակցվածությանը,
   - առարակա յական նկարագրերի բովանդակության տարբերակմանը՝ ըստ արվեստանոցների և ղեկավարների դասավանդման առանձնահատկությունների ու մեթոդների,
   - ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմների հետևողական կիրառմանը,

- ամբիոնային հետազոտական ուղղությունների սահմանմանը՝ հիմնվելով բուհի ռազմավարական առաջնահերթությունների և ռեսուրսների վրա,
- համապատասխան նյութական և մարդկային ռեսուրսների ներգրավմանը որակի ապահովման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով:

4. Կազմակերպել ԵԹԿՊԻ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԵԹԿՊԻ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2023 թ. մարտի 14
ք.Երևան